

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. II եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ

2020թ. II եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 42 առևտրային և 8 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 78-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 1-ի գործունեությունը՝ դադարեցվել:

1 հիմնարկ վերցրվել է պետական հաշվառման, 6 հիմնարկ և 1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 162 անհատ ձեռնարկատեր, 42 -ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 22 -ի գործունեությունը՝ դադարեցվել:

10 սուբյեկտի վերաբերյալ տրամադրվել են ամբողջական տեղեկություններ:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			Ամբողջական տեղեկությունների սրահում	Ներդրումը	պետ. ստոր գին (հարյուր հազար)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադար			
Կենտրոնական մարմին	7	11		1	1						20	140
Ստեփանակերտ	31	54	1		4		79	27	17	8	221	1167,5
Ասկերան	3	1			1		16	1			22	104,5
Հաղրուֆ		3					15			1	19	66
Մարտակերտ	2	2					21	1	1		27	110,5
Մարտունի	2	1			1		15	13	1	1	34	112,5
Շուշի	2						7		3		12	55
Քաջաթաղ	3	6					9				18	114
Ընդամենը	50	78	1	1	7		162	42	22	10	373	1870

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 77 (75/2) տեղեկանք:

Տրամադրվել է իրավաբանական անձի 6 կանոնադրության պատճեն:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 1 963 000 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում II եռամսյակում արտաբյուջե է մտցվել 507 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 3 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել ապառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

Գործակալության պետ

Գ. Մաքսիմովա

Կատարող՝ Բ. Առստամյան